

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԼՈՒՍԱՔԱՆՈՒԹՅԱՄԲ

Հայ պարբերական մամուլի ուսումնասիրությունը, մանավանդ վերջին մեկ, մեկուկես տասնամյակում Սովետական Հայաստանում բավական լայն ծավալ է ընդունել։ Այդ ուղղությամբ որոշ աշխատանք է կատարվում նաև սփյուռքում։ Վերջին ժամանակներում հայ մամուլին ներկրված հրատարակություններից ուշագրավ է Պետրոս Ֆրունձյանի «Հայ մամուլի ծագումն ու պարզացումը և նրա ազդեցությունը հայ նոր դրական լեզվի ու քաղաքական մտքի կազմավորման վրա» խորագրով դիրքը (գերմաներեն)¹։

Այս դիրքը գերմաներեն առաջին ծավալուն աշխատությունն է հայ պարբերական մամուլի մասին² և ներկայացվել է որպես դասերտացիա Արևմտյան Բեռլինի Ազատ համալսարանին՝ փիլիսոփայության դոկտորի աստիճան հայցելու համար։

Աշխատությունը բաղկացած է ներածությունից և չորս հիմնական մասից։ Ներածության մեջ խոսվում է հայ ժողովրդի պատմա-մշակութային անցյալի, գրերի գյուտի, Աստվածաշնչի թարգմանության, հայ տպագրության ու մամուլի սկզբնավորման մասին։

Ըստ Պ. Ֆրունձյանի մինչև 1920 թ. հայերի քաղաքական հիմնական գաղափարներն իբրև թնդհանուր էին և հանդում էին անհատի ու ազգի ազատության ձգտումներին, ըստ որում թե՛ մտավորականությունը՝ ամբողջությամբ վերցրած, և թե՛ կուսակցությունները իբրև թե՛ գործում էին մաքուր ազատ շրջանակներում, իսկ 1920 թ. հետո, քաղաքական սուր հակասությունների հետևանքով, խիստ պառակտում մտցվեց Սովետական Հայաստանի ու սփյուռքի միջև (էջ 19—20)։

Իդեալականացնելով անցյալը («բոլոր հայերի քաղաքական հիմնական գաղափարների միասնություն») Ֆրունձյանի ակնհայտ նպատակն է հակադրել սովետահայ մամուլը («ղեկավարվող», ինչպես ինքն է ասում) անցյալ և ներկա սփյուռքահայ «ազատ» և «գեմեկրատական» մամուլին։

Գրքի «Պատմական նախադրյալներ» մասը նվիրված է հայ ժողովրդի պատմությանը։ Վիճակագրական տեղեկություններ հաղորդելով Սովետական Հայաստանի ու նրա բնակչության մասին (1959 թ. տվյալներով), հեղինակը համեմատական թվեր է բերում նախկին Օսմանյան կայսրության (մասնավորապես հայկական վիլայեթներում) ու ժամանակակից Թուրքիայի սահմաններում ապրող հայերի մասին։ Այնուհետև նա փորձում է համառոտ վերաչարագրել հայ ժողովրդի պատմությունը՝ հնագույն շրջանից մինչև 1920-ական թվականները։

Հաջորդ գլուխն անվորված է հայ պարբերական մամուլին։ Պ. Ֆրունձյանն ընտրել է մեր մամուլը քառասնամյակների բաժանելու ու ներկայացնելու մի ձև, որը ոչ միայն չի համապատասխանում հայ մամուլի պատմության դիտական պարբերացմանը, այլև չի հիմնավորվում, թեև նա փորձում է դա անել գրքի ներածական ակնարկում։

Ահա այդ քառասնամյակները. 1794—1840. հայ մամուլի սկզբնավորման տարիները լույս տեսած հայկական թերթերի ու ամսագիր-տարեգրքերի մեջ ձևավորվում են լրագրության էական կողմերը։ Կանգ առնելով «Ազդարարի» վրա, հեղինակը, պատշաճ փաստարկներ չբերելով, ենթադրում է, թե այն կազմակերպել էր ինչ-որ կոմիտե՝ խնդիր ունենալով ազատագրել Հայաս-

¹ Bedros Froundjian.—«Entstehung und Entwicklung der armenischen Presse und ihr Einfluss auf die neuarmenische Schriftsprache und die politische Meinungsbildung» Berlin. 1961, 227 S.

² Մեզ հայտնի մյուս նյութերը հայ մամուլի համառոտ ակնարկներ են. Ա. Բ. Հովհաննիսյան, Հայ լրագրությունը («Das armenische Zeitungswesen»), «Armenische Bibliothek»-ի ներկրող պրակ), Զ. Գրինֆիլդ, Հայկական մամուլը (Greenfield, J.—«Die armenische Presse»), Պ. Ռորբախի «Armenien» աշխատության մեջ (Շուտագարա 1919, էջ 88—95)։

տանը, Այնուհետև հեղինակն անցնում է վեներտիկի «Տարեգրություն», «Եղանակ Բյուզանդյան», «Հիշատակարան», «Դիտակ Բյուզանդյան» հրատարակություններին:

1841—1880. Հայ մամուլի հետագա զարգացման տարիները Փնտթյան են առնված հեղինակի խոսքերով ասած՝ «ուղղություն» տվող պարբերականները՝ «Բազմավեպ», «Հայրենասեր», «Ազգասեր», «Հայաստան», «Մասիս», «Արևելք», «Արևմուտք», «Հյուսիսսփյալ», «Մշակ», «Փոքր», «Բարտոն», «Ծաղիկ», «Հայրենիք» և այլն: Այդ և մի շարք այլ պարբերականների մասին բերված տվյալները մեծ մասամբ մատենագիտական տեղեկանք են՝ արդեն ծանոթ ընդհանուր ընդդրություններով: Շատ պարբերականներ հեղինակը միայն թվարկում է. նշելով հրատարակության վայրը, թվականը, երբեմն նաև խմբագիրներին:

Կանգ առնելով առանձին պարբերականների վրա, հեղինակը շեշտում է գրանցում քննված խնդիրները, մանավանդ լեզվի հարցերը:

1881—1920. Կարողանալով տեղավորվել իր ընտրած «40-ամյակների» շրջանակներում, հեղինակը ստիպված է եղել այդ ժամանակաշրջանը մասնատել առանձին հատվածներով, նա խոսում է նախ մամուլի վիճակի մասին Թուրքիայում մինչև 1909 թ., երբ նրա գոյության ու զարգացման հնարավորությունները համիդյան անօրինակ խստությունների ու հալածանքների հետևանքով շատ սահմանափակ էին, ապա անդրադառնում է 1909—1914 թթ.:

Այնուհետև հեղինակն անցնում է մի շարք թերթերի համառոտ ընդթագրմանը. «Հայրենիք» (նոր շրջան), «Մարտ» և «Նոր կյանք», «Արևելք», «Բյուզանդիոն», «Ծաղիկ», «Հանդես ամսօրյա», «Արձագանք», «Անահիտ», «Հայաստանի կոշիկ», «Նոր-դար», «Մուրճ», «Ազգագրական հանդես» և այլն: Եվ քանի որ նույն այդ ժամանակաշրջանում են առաջացել հայ թագաքական կուսակցությունները, նա հատուկ ենթազվածում անդրադառնում է նաև կուսակցական մամուլին, ժամանակագրական կարգով հիշատակելով (խմբավորելով) առաջին կուսակցական թերթերը («Արմենիա», «Հնչակ», «Դրոշակ», «Պրոլետարիատ», «Բանվոր», «Կայծ»)։

Պ. Ֆրունձյանն առաջին տեղը հատկացնում է դաշնակցական մամուլին, այնուհետև խոսում է հնչակյան, ռամկավար ու լեզգո թերթերի մասին: Հայ բոլշևիկյան թերթերը, գրում է նա, մինչև 1920 թ., լույս էին տեսնում փոքր տպաքանակներով (Թվեր, Իհարկ, Նին բերվում և չի խոսվում այն մասին, որ բոլշևիկյան մամուլը կարդում էին մեծ մասամբ գործարանային բանվորները և թերթի մի օրինակը հաճախ ընթերցում էին տասնյակ մարդիկ): Նրանք թափ առան միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից սկսած, շարունակում է հեղինակը:

1921—1960. Նախքան մամուլի հարցերին անցնելը, Պ. Ֆրունձյանը պատմական էքսկուրս է կատարում, զուտ դաշնակցական տեսանկյունով լուսաբանելով Հայաստանի հանրապետության ստեղծումը, սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, փետրվարյան հակահեղափոխական խռովությունն ու նրա պարտությունը: Անցնելով հայ մամուլին, հեղինակը շարունակում է այն դիտել ըստ էության նորից լեզվական երկու լսափանիշով՝ արևելահայ (սովետահայ) և արևմտահայ:

Սովետական մամուլի արագ զարգացումը, մանավանդ թերթերի ու ամսագրերի տպաքանակների աննախընթաց վերելքը փաստեր են, որոնց մոտով լռությամբ անցնեն անհնար է: Պ. Ֆրունձյանը բերում է այդ փաստերից մի քանիսը, որոնք ինքնին պերճախոս են: Օրինակ, նա նշում է, որ «Սովետական Հայաստան» օրաթերթի տպաքանակը 1924-ի 4.500-ից 1953-ին հասել էր 85 հազարի: Նա խոսում է սովետահայ մյուս պարբերականների թվական մեծ աճի մասին ևս, բայց միտած մանակ այդ տպավորությունը թուլացնելու համար նշում է, որ զա առաջ է եկել մասամբ թանձրների փոփոխություններից, որ այն տարիներին, միջանկյալ ակնարկում է նա (նկատի ունի 30-ական թվականները) հաճախ էր պատահում:

Սովետական Հայաստանում 1960 թ. լույս տեսնող պարբերական հրատարակությունների մասին Պ. Ֆրունձյանը խոսում է առանձին, հաշվելով նրանց թիվը 82 (աճողորմ վիճակագրության պակասի հետևանքով, ինչպես ինքն է հայտարարում): Իրականում, 1960 թ., կոլտնտեսային թերթերի հետ միասին, Սովետական Հայաստանում կար 144 անուն պարբերական: Իր հիշած թվից նա բերում է 63-ի ցանկը՝ մատենագրական տվյալներով հանդերձ:

Պ. Ֆրունձյանը ոչինչ չի ասում այն խոշոր գերի մասին, որ կատարել է սովետահայ պարբերական մամուլը երկրի վերականգման, նրա տնտեսական շինարարության, ժողովրդական կրթության, գիտության վերելքի գործում: Նրա հիմնական նպատակն է, հակադրել արևմտյան «ազատ» մամուլը սովետական մամուլին և այդ ֆոնի վրա՝ սփյուռքահայ պարբերականները՝ սովետահայ պարբերականներին, ըստ որում նա հայ իրականության անծանոթ ընթերցողին բանն

այնպես է ներկայացրել, որ ժամանակակից ամբողջ սփյուռքահայ մամուլն ընկալվի իրեն արեւմտյան բուրժուական մամուլի մի մասը³։

Հեղինակը և՛ այստեղ, և՛ այլուր ժնդադրանքներն է նետում սովետահայ մամուլի հասցեին, մասնավորելով խոսքը «Սովետական Հայաստան» թերթի վրա։ Այնուհետև նա անդրադառնում է սփյուռքահայ պարբերականների նշանակությանն ու կատարած դերին՝ որպես աղագայական ման գործոնի և տարբեր երկրներում ցրված հայ հատվածների մշակութային յուրահատուկ օջախների։

Պ. Ֆրունձյանը ընկալելով և մասամբ էլ մատենագիտական տեղեկություններ է հաղորդում արտասահմանյան հայ գաղթօջախներում 1921—1960 թթ. լույս տեսած պարբերականների մասին, Դրանք հետաքրքիր լինելով հանդերձ (մասնավորապես օտար ընթերցողների համար), դերձ չեն թերություններից ու սխալներից։

Ինքնուրույն տարբեր ժամանակաշրջաններում հայ մամուլի տպաքանակների վերաբերյալ, Պ. Ֆրունձյանը ակամայից հանդում է այն եզրակացություն, որ հայ մամուլը երբեք այնպիսի թոփաքային աճ չի ապրել, ինչպես սովետական տարիներին։

Իրերի երրորդ մասը նվիրված է հայ նոր գրական լեզվի վրա մամուլի թողած ազդեցության հարցին։ Այստեղ հեղինակը գիտահանրամատչելի ձևով շարադրել է պատմական այն դերը, որ խաղացել է մամուլը հայ գրական լեզվի ձևավորման ու զարգացման գործում։

Այնուհետև հեղինակը, ըստ արևմտահայ և արևելահայ հատվածների, քննում է մամուլի և գրականության խնդիրները։ Այս ենթադրույթը փաստորեն հայ նոր գրականության պատմության թուռցիկ մի ակնարկ է, Ըստ Պ. Ֆրունձյանի, ժամանակակից սփյուռքահայ գրականությունը սոսկ ժամանակահատվածում գրականության շարունակությունն է՝ նոր միջավայրում, նա այդպես էլ անվանում է՝ արևմտահայ գրականություն, երբեմն միայն գործածելով հետպատերազմյան գրականություն տերմինը։ Այդ գրականության հիմքը, դրում է նա, գրվեց առաջին համաշխարհային պատերազմի «տարադրության ցավալի տարիներին» տեղի ունեցած դեպքերի նկարագրություններով⁴, իսկ ավելի ուշ այն սկսեց արտացոլել սփյուռքահայ կյանքը։

Երջանցելով արևմտահայության ապրած ծանր ողբերգությունը, Պ. Ֆրունձյանը խոսում է միայն սփյուռքահայ դրողների դժվարին կյանքի, գրքերի տպագրության ու սպառման շատ նեղ հնարավորությունների մասին։ Հեղինակը, իհարկե, շատ լավ գիտե, որ գրականությունն առանց հեռանկարի ապրել չի կարող, որ սփյուռքահայ գրողները ևս պետք է ակնկալություններ ունենան ապագայից և, անշուշտ, հայրենասեր լինեն։ Ըստ որում նա այդ գրողների միակ արժանիքը համարում է այն, որ նրանք հայ ժողովրդի ճակատագիրը մոռացության չեն տալիս, այլ փորձում են սուղիոլոգիական տեսակետից նոր ուղիներ փնտրել (էջ 164)։ Ո՞ր գրողներն է ի՞նչ ուղիներ՝ հեղինակը բարձր է համարում լույս։

Անցնելով հայ գրականության արևելյան ճյուղին, հեղինակը շեշտում է, որ արևելահայ գրողները գտնվելով ոռոսական տիրապետության սահմաններում, գրելու և գործելու ավելի շատ հնարավորություններ ունենում, որ արևելահայ գրականության վրա մեծ է եղել ոռոսական ազդեցությունը և այն աչքի է ընկել իր ընդգծված հասարակական բովանդակությամբ ու հրապարակախոսական բնույթով։ Նրա առաջ, ըստ Պ. Ֆրունձյանի, չի ծառացել «արվեստն-արվեստի» համար սկզբունքը։ Արևելահայ գրողները նույնպես կապված էին մամուլի հետ և այդ ճանապարհով մեծ ներգործություն էին ունենում աշխարհաբարի արագ զարգացման վրա։

Սովետական գրականության մասին գրքի հեղինակի արտահայտած մտքերը նորություն չեն։ Եւ կրկնում է մոտավորապես այն, ինչ հաճախ հուշվում են դաշնակցական գրականագետները, որոնցից նա օգտվել է։

Զուգահեռ անցկացնելով սովետահայ և սփյուռքահայ գրողների աշխատանքի ու ստեղծագործելու պայմանների միջև, նա արձանագրում է Սովետական Հայաստանի գրողների ստեղծագործական լայն հնարավորությունները, գրքերի տպագրության ու սպառման անբաղդատելի շա-

3 Ելնելով արևմտահայ մամուլին իր ըմբռնումից, նա անշատում է Ռումիխայի և Բուլղարիայի հայ պարբերականները, սոսկ ասելով, թե դրանք իրենց թվովտրական դիրեկտիվները» ստանում են Սովետական Հայաստանից», էջ 117։

4 Ֆրունձյանի համար հայ ժողովրդի հաճվոր ցեղասպանությունը իր մեկուկես միլիոն զոհերով լուր ցցավալի տարիներին դեպքեր են։ Նա, որ սիրում է իր գրքում հաճախ անուններ թվարկել, լուրջությամբ է անցնում այդ նույն օրերին երիտթուրքերի կատաղարության հրամանով գահաճար խոշտանգված արևմտահայ գրողների փալլուն շարքի կողքից։

ստեղծագործում են սփյուռքի հայ գրողները:

Խոսելով Սովետական Հայաստանում մամուլի րառաշինարարության մասին, հեղինակը թեև կրկնում է ինչ գանգատները նոր ուղղագրության, օտար և ուսու բառերի չափից ավելի շատ գործածելու դեմ, որը, ինչպես նա է ասում, իբր ասեղանի է ստեղծում հայ ժողովրդի երկու մասերի միջև, բայց չի համարձակվում ժխտել այն փաստը, որ սովետահայ մամուլը խոշոր դեր է կատարում լեզվի զարգացման, հղկման ու հարստացման բնագավառում՝ մանավանդ վերջին շրջանում:

Գրքի շորթորդ մասը, որ վերնագրված է «Մամուլի աղդեսությունը քաղաքական մտքի կազմավորման վրա», ամենից ավելի հատկանշական է Պ. Ֆրունձյանի հասարակական-քաղաքական հայացքների բնութագրման համար: Այստեղ նա չի ծածկում իր քաղաքական կողմնակալությունը դաշնակցության հանդեպ՝ հայ կուսակցությունների մեջ առաջնությունը կրկին նրան տալով: Ինչպես նախորդ, նույնպես և այս հատվածում հեղինակը համարյա բոլոր մեջբերումները կատարում է դաշնակցական մամուլից, սպավորություն ստեղծելու համար, թե հրապարակի վրա գոյություն ունի միայն կամ գլխավորապես դաշնակցական մամուլը: Ավելին. նա մասամբ «Դրոշակից» վերցնելով, մասամբ ինքն ավելացնելով, տառը կետերում ձևակերպում է մամուլի առջև դրված խնդիրները, որոնց մեջ կան և՛ տեղորի փոոարանում, և՛ համագործակցություն երիտթուրքերի հետ, ու վերագրում է դրանք ժամանակի ամբողջ հայ մամուլին:

Արդարացնելով երիտթուրքերի հետ դաշնակցության համագործակցությունը և համիդյան ուժի ստապուման գործում լիթխարի դեր վերադրելով նրանց, հեղինակը լուսվյան է մատնում նույն երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը, փորձ է անում նույնիսկ ինչ-որ չափով մեղմացնել դրանք՝ շեշտելով զավառներում տիրող մահմեդական մոլեռանդությունը և ներքին սոցիալ-տնտեսական դժվարությունները: Միայն վերջում հեղինակն ավելացնում է, որ թուրքերի մուսթը համաշխարհային պատերազմի մեջ թույլ տվեց կոռավարությունը ազատ զգալ իրեն՝ ասն (կառավարությունը—Մ. Բ.).— գրում է Պ. Ֆրունձյանը,— ոչ միայն արհամարհեց բարենորոգումների վերաբերյալ որոշումները, այլ հայ բնակչությունը տարագրեց դեպի սիրիա-իրաքյան անապատները» (էջ 193):

Ահա այն ամենը, ինչ Պ. Ֆրունձյանը հնարավոր է գտնում ասել հայկական մեծ հեղեղի մասին: Ուշագրավ է, որ հեղինակը շատ ժաշտ է նաև այն դեպքում, երբ խոսում է արևմտահայության մղած ինքնապաշտպանական մարտերի մասին: Նա հիշատակում է միայն Վանի դուրացանական պաշտպանությունը, մոռացության տալով դիմադրության մյուս օջախները, այդ թվում և Մուսա լեռան հերոսներին:

Գրքի ամբողջ հաջորդ գլուխը նվիրված է դաշնակցության հանրապետությանը և մամուլի հարցերին: Շատ հապճեպորեն անցնելով առաջին համաշխարհային պատերազմի և 1917—1920 թթ. իրադարձությունների վրայով, հեղինակը պարզապես կրկնում է այդ տարիների դաշնակցական մամուլում արծարծված մտքերը, չմոռանալով, իհարկե, գովերգել Վիստին ու նրա առաջագրած տիրահույակ 14 կետերը:

Ինչ վերաբերում է այդ տարիների մամուլին, ապա Ֆրունձյանը առանց այլևայլության այն բաժանում է երկու խմբի՝ հայրենասիրական և ոչ հայրենասիրական: Առաջինը, որ մեծամասնություն էր կազմում, գրում է նա, հայ հասարակական միջավայրի ծնունդ էր և պայքարում էր ազատագրության, հայ ժողովուրդին ի մի հավաքելու և ինքնորոշման հիմունքով ազատ հայրենիք ստեղծելու համար: Ավելորդ է ասել, որ այս դեպքում ևս նա նկատի ունի դաշնակցական մամուլը:

Կեղծելով ու շրջանցելով հայտնի փաստերը, տեղ չտալով հայ բոլշևիկյան մամուլին, հեղինակը պնդում է, որ իբր թե կոմունիստական հայացքների տարածումը հայ իրականության մեջ հաջողություն չէր ունենում: Միայն 1917-ից հետո է, որ, շարունակում է Պ. Ֆրունձյանը, Պետերբուրգի, Մոսկվայի, Թիֆլիսի ու Բաքվի ուսանողների շրջաններից դուրս եկած արիտասարդներն սկսեցին կոմունիստական թերթեր հրատարակել ու ակտիվ քաղաքական գործունեություն ծավալել քաղաքաբնակ հայերի մեջ: 1920 թ. վերջերից, երբ Հայաստանը դարձավ Սովետական հանրապետություն, ավարտում է խոսքը հեղինակը, «...արևելահայ մամուլն անցավ Սովետական Հայաստանի կոմունիստական կուսակցության ձեռքը» (էջ 195):

Պ. Ֆրունձյանը գրքի վերջին գլխում քննում է ժամանակակից հայ մամուլի քաղաքական աղդեսության հարցերը՝ սկսելով սովետահայ («արևելահայ») մամուլից: Գծգծնելով, որ սովետական մամուլը հանդիսանում է սովետական շինարարության, աշխատավորների կոմունիստա-

կան դաստիարակության կարևոր միջոց և իմպերիալիստական գաղափարախոսության դեմ պայքարի հատու զենք (այդ ամենը հեղինակը անվանում է մամուլի կուսակցական ղեկավարություն), նա նորից կրկնում է այն բոլոր «մեղադրանքները», որ բուրժուական Արևմուտքը բարդում է սովետական մամուլի վրա, ավելացնելով դրան, որ սովետահայ թերթերն ու մամուլը-րերը շատ նյութեր են վերցնում և թարգմանում SUUU-ից և առհասարակ ուսական կենտրոնական մամուլից: Պ. Ֆրունձյանին դուր չի գալիս, որ մեզ մոտ հրապարակախոս-լրագրողը «պրոպագանդիստ ու ագիտատոր է»:

Վերջացնելով իր խոսքը 1920—1960 թթ. սովետահայ մամուլի գործունեության մասին, հեղինակը կատարում է մի շարք ընդհանրացումներ, որոնք լույս հետաքրքրական են թե՛ իր և թե՛ մանավանդ սփյուռքահայ որոշ շրջանների մտահայեցությունը. բնորոշելու տեսակետից, ի վիճակի չլինելով անտեսել Սովետական Հայաստանի և մասնավորապես սովետահայ մամուլի նվաճումներն ու հաջողությունները, հեղինակը ստիպված է արձանագրելու, որ սովետական տարիներին հայ մամուլը հսկայական աշխատանք է տարել: Ահա այդ խոստովանությունները իրենց հակիրճ ձևով մեջ. պայքար անդրադիտության դեմ, ջանքեր՝ երկիրը վերականգնելու ավերակների միջից, սինդիկատական րանվոր դասակարգին, երկրի ինդուստրացում, գիտության, կրթության, մշակույթի ազգային գրականության ու արվեստի զարգացում (դպրոց, համալսարան, ինստիտուտներ, գիտությունների ակադեմիա, թատրոն, կոնսերվատորիա, ռադիո, հեռուստատեսություն և այլն): Երկ-րորդ համաշխարհային պատերազմի տարիներին, բոլոր ուժերի մերիտքացում թշնամուն հաղթե-լու համար՝, սովետական հայրենասիրության պրոպագանդա և վերելք: Պատերազմից հետո. դանդաղածային հայրենադարձություն, մշակութային կապերի լայնացում սփյուռքահայության հետ, Սովետական Հայաստանն ամսագրի հիմնադրում, ուսումնական և տուրիստական համ-փորդությունների միջոցով անհատական կապերի խրախուսում, սփյուռքահայ ուսանողների ըն-դունում Երևանի բուհերում և այլն: Կոմունիստական պրոպագանդան ու ագիտացիան աստի-ճանաբար (դդուշուկայով արտահայտվում է հեղինակը) հող է գտնում նոր սերնդի մեջ, այդ բանին օգնում է և տնտեսական առաջդիմությունը: Սովետական Միության տեխնիկական նը-վաճումները հպարտությանբ են համակում երիտասարդ սերնդին (էջ 200): Եարունակելով իր խոսքը, հեղինակը նշում է, որ Սովետական Միության տնտեսական պլանները, տեխնիկական մասնագիտացումը, ինդուստրացումը Սովետական Հայաստանում ևս կենսամակարդակի հետագա բարելավման հավատ են ներշնչում, լավատեսության բարձրացման իրական հիմք տալիս, որը ամենօրյա պաշտպանություն է գտնում նաև մամուլում: Այս խոստովանություններից հետո Պ. Ֆրունձյանը նորից վերադառնում է կարծիքների «աղատ» փոխանակման հարցին և երկմտանք է հայտնում, թե գտնվում է հրատարակվող թերթերի քանակի հիման վրա հետևություններ անել մամուլի բացարձակ ազդեցության մասին:

Այս անցնելով սփյուռքահայ մամուլի «հիմնական սկզբունքներին» քննությանը, նա նախ համառոտորեն պատմում է հայ նոր սփյուռքի (հայկական նոր գաղթյալների և մամուլի նո-րաստեղծ օրգանների) մասին, շմոռանալով կրկնել իր հանգեբար արևմտյան մամուլի «աղա-տության» մասին: Հավատարիմ իր որգեբարած տեսակետին, որով սփյուռքահայ ամբողջ մամուլը նույնանում է դաշնակցական մամուլին, հեղինակը փորձում է ներկայացնել սփյուռքահայ մա-մուլի ծրագրերն ու նպատակադրումը:

Միտումնավոր կերպով գերազանցատելով դաշնակցական մամուլի դերը, նա կրկին դիմում է իր սիրած թեմային, որպեսզի նորից փորձի համոզելու, թե ազատ կարծիքների փոխանակման շնորհիվ արևմտահայերը ապահովված են կողմնակալ լուրերից. «Երանք,— դրում է Պ. Ֆրունձյանը,— հաստատում, ընդունում են Սովետական Հայաստանի վերջին տարիների մշակութային ու տնտեսական զարգացումը, սակայն չեն ընկնում չափազանցված լավատեսության մեջ» (էջ 204): Նա համառ կերպով լուծում է սփյուռքի հայ կոմունիստական-առաջադիմական մամուլի մա-սին, թեև երբեմն ստիպված է լինում ակամայից մեկ-երկու խոսքով հիշատակել նրա զույլություն: Նա ոչ մի խոսք չի ասում, օրինակ, կոմունիստական այն օրգանների մասին, որ 1920 թ. հետո հրատարակվել են Բուլղարիայում, Հունաստանում, Սիրիա-Լիբանանում, Ֆրանսիայում, Ամերիկայում և այլուր ու շարունակվում էին հրատարակվել շատ վաղերում նաև 1961 թ., երբ նա հրատարակել է իր դիրքը: Նա չի խոսում նաև բողոքող դաշնակցականների ոչ կոմունիս-տական օրգանների մասին, որանց խիստ քննադատության է ենթարկվում դաշնակցության վա-

5 Եստ քնորոշ է, որ նա ոչ մի խոսք չի ասում, թե ով էր այդ թշնամին: Նրա գրքում առ-հասարակ բացակայում է «Ֆաշիզմ» բառը:

րած քաղաքականությունը: Այս և նման հարցերում շատ ցայտուն կերպով արտահայտվում է հեղինակի ընդգծված կողմնակալությունը, որ բնավ չի համակերպվում նրա դիտական հավանությունների հետ:

Պ. Ֆրունձյանի այս աշխատությունը ըստ էության ծառայում է երկու նպատակի՝ օտար ընթերցողներին ինչ-որ չափով ծանոթացնել հայ մամուլի, լեզվի, հասարակական մտքի պատմությանը և, այդ հենքի վրա, պրոպագանդել այն քաղաքական միտումները, որոնց հիմնական նըպատակը սովետահայ մամուլի հասարակական մեծ դերի նսեմացումն է, ծուռ հայելու մեջ ցուցադրելու նրկու դեպքում էլ Պ. Ֆրունձյանը չի հասել իր նպատակին: Միակ բանը, որին նա հասել է, հայ մամուլի պատմության և նրա դերի ոչ գիտական, աղավաղված լուսարանելն է:

Գրախոսվող գրքի երևան գալը մի ավելորդ անգամ շեշտում է հայ դարավոր մամուլի պատմության ամբողջական ուսումնասիրության անհրաժեշտությունը: Սովետահայ գիտնականների առաջնահերթ խնդիրն է ստեղծել հայ պարբերական մամուլի թեկուզ համառոտ մարքսիստական պատմությունը և ներկայացնել ընթերցողների լայն շրջաններին, այն հրատարակելով նաև օտար (եվրոպական) լեզուներով:

Մ. Ա. ԲԱՅԼՈՅԱՆ
Բաճասիրական գիտությունների
բեկնածու